ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N32-Ա

«27» սեպտեմբերի 2018 թվական գյուղ Հայկասար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՇԵՆՔԻ 168,01 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏԱՐԱԾՔԸ (13 ԱՇԽԱՏԱՍԵՆՅԱԿ) ԱՆՀԱՏՈՒՅՑ, ԱՆԺԱՄԿԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ «ՀԱՅԿԱՍԱՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթով և հաշվի առնելով, որ Հայկասարի հիմնական դպրոցի շենքը քայքայված է և չկան բավարար պայմաններ դպրոցի դասընթացները կազմակերպելու համար, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկասար համայնքի ավագանին

ո ր ո շ ու մ է

1. Համայնքի ղեկավարի առաջարկությամբ, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկասար համայնքի սեփականությունը հանդիսացող համայնքապետարանի շենքի 168.01 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով տարածքը (11 աշխատասենյակ) անհատույց անժամկետ օգտագործման իրավունքով տրամադրել «Հայկասարի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ դպրոցի դասընթացները կազմակերպելու համար:

2. «Հայկասարի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ անհատույց անժամկետ օգտագործման իրավունքով տրամադրվող տարածքի համապատասխան որակավորում ունեցող մասնագետի կողմից կազմված հատակագիծը կցվում է որոշմանը:

2. Համայնքի ղեկավար՝ Հրաչ Բարսեղյանին՝

ա) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածի համաձայն «Հայկասարի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ կնքել գույքի անհատույց օգտագործման պայմանագիր:

բ) ապահովել սույն որոշումից բխող իրավունքների պետական գրանցումը: